

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ԻՍՈՒՎԱՅԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԽԵԹԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհի հնագույն պետությունների և խեթական տերության փոխհարաբերություններին նվիրված բոլոր պատմագիտական հետազոտություններում գերազանցապես քննարկվել են ռազմաքաղաքական, տեղանվանաբանական և անվանաբանական խնդիրներ: Այդ պատճառով գրեթե անտեսվել են այնպիսի տեքստեր, որոնք անմիջականորեն չեն առնչվում քաղաքական պատմությանը, սակայն թույլ են տալիս խորացված պատկերացում կազմելու վերինեփրատյան երկրների և նրանց արևմտյան հարևանի վախճարաբերությունների բնույթի մասին:

Առաջարկվող հոդվածում կներկայացվեն ծիսա-պաշտամունքային բնույթի երկու տեքստեր, որոնք առաջին անգամ են հրատարակվում գիտական տառադարձմամբ և թարգմանաբար: Դրանք վերաբերում են Իսուվայի (հայկ. Ծոփք) երկու քաղաքական և կրոնական կենտրոնների աստվածությունների պաշտամունքին: Տեքստերը հայտնաբերվել են խեթական տերության մայրաքաղաք Խաթթուսասի պեղումների ընթացքում:

Վատարարմա քաղաքի աստվածը

Տեքստ: KUB LVI 40¹ – Ինվենտարային համարը՝ Bo 2564: Պահպանվել է տեքստի մեկ աղյուսակը, որի Դ-իմային կողմի (Դ-կ) առաջին սյունակից՝ 11 սաղ (Դ-կ-ի երկրորդ սյունակը ամբողջությամբ կործակվել է ենթարկվել), Հակառակ կողմի (Հ-կ) երրորդ սյունակից՝ 22 տող, չորրորդ սյունակից՝ 20 տող: Հ-կ չորրորդ սյունակով տեքստն ավարտվում է, ինչի մասին վկայում է գրչի կողմից արված մակագրությունը:

Տեքստի բնույթը

KUB LVI 40-ը պատկանում է խեթական սեպագիր կորպուսում լավ վկայված՝ ծիսական ինվենտարը ներկայացնող տեքստերի շար-

քին²: Գրանցում արվում է խեթական տերության տարրեր շրջանների բնակավայրերի, լեռների, գետերի, աղբյուրների և այլ օբյեկտների աստվածությունների երկրպագման կանոնակարգը՝ իր կոնկրետ դրսևորումներով: Կանոնակարգը՝ ներառում է հետևյալ գործողությունները:

Աստվածության արձանը⁴ տաճարի մի հարկաբաժնից (արձանի գտնվելու մշտական վայրից) անդախտաբար էին *huwasi* կոչվող հաստատություն⁵, դնում էին պատվանդանին, որից հետո կատարում էին մատուցումները (զանազան ըմբռնելով՝ ալյուր, էմմեր, ոգելից խմիչքներ՝ գինի, գարեջուր, ոչխարի գոհաբերություն): Այնուհետև աստծու արձանը ետ էին տանում:

Աստվածության երկրպագման արարողակարգը վարում էր արքան՝ թագուհու հետ միասին (երբեմն՝ կամ արքան կամ թագուհին):

Իրենց աստվածություններով ներկայացված հեռավոր շրջանների և հատկապես խեթական տերությունից դուրս գտնվող երկրների հիշատակությունը⁶ ստիպում է ենթադրել, որ ծիսական արարողությունները պիտի ընթանային մայրաքաղաք Խաթթուսասի կամ դրա մոտակայքի որևէ տաճարում, որտեղ տեղադրված էին համապատասխան աստվածությունների արձանները: Յուրաքանչյուր աստվածության երկրպագման համար հատկացված էր մեկական քուրմ⁷:

KUB LVI 40

Գիտական տառադարձում

ԴԿ I

5) [.....]x ha [.....]

6) [.....]x [.....]

7) [1^{DUG}h]a-ni-iš-sa-as KAŠ^{G¹⁸}ZAG.GAR.RA (-ni) ?]

8) [X BÁN ZLD]A 1^{DUG}hu-up-pár KAŠ [da-pí-aš EGIR-an-da (?)]

9) [^{DUG}har-š]i ma-al-la-an-zi h[ar-ra-an-zi]

10) [GIM-an]-ma-kán DINGIR^{LUM} NINDA.KUR₄.RA^{DU}[^{G¹⁸}har-ši (I-NA)^{NA⁴}ZI.KIN]

11) [p]í-da-an-zi 1 UDU an-na-al-[li-in//la-an BAL-an-zi]

12) NINDA.KUR₄.RA^{DUG}har-ši 1^{DUG}[hu-u]p-[pár KAŠ]

13) ^{G¹⁸}ZAG.GAR-ni 2 BÁN ZLD[A 1 (?) DUG KA.GAG.A (?) 1 (?) DUG KAŠ aš-nu-ma-aš]

14) DINGIR^{LUM}ar-ha pí-da-an-[zi]

15) [...x[.....]

§4 III

- 1') [1?] NINDA. KUR₄. R[A] ^{DUG}ḫar]-ši 2 BÁ[N ZI.DA]
 2') 1 DUG KAŠ EGIR-an-da t[i-ia-an ^(GIŠ)ZAG.GAR.RA-ni?]
 3') 1 PA ZI.DA 2 DUG KA.GAG.A [aš-nu-ma-aš]
 4') [DINGIR]^{MES} ar-ḫa pí-tén-zi 3 [^{NINDA}dan-na-aš pár-ši-ia]
-
- 5') [GI]M-[an]-ma ^{HUR. SAG}Wa-an-za-pa-an-da-an []
 6') NINDA.KUR₄.RA ^{DUG}ḫar-si I-NA ^{NA4}ZI.K[IN]
 7') pí-da-an-zi 1 UDU BAL-an-zi []
 8') NINDA.KUR₄.RA ^{DUG}ḫar-ši 2 BÁN ZI.DA 1 ^{DUG}ḫu-up-pnr
 KAŠ]
 9') 1 DUG KA. GAG. A EGIR-an-da ti-ia-[an ^(GIŠ)ZAG. GAR. RA-
 ni?]
 10') 1 PA ZI.DA 1 DUG KA.GAG.A aš-nu-ma-aš []
-
- 11') DINGIR^{LUM} ar-ḫa pí-da-an-zi 1 ^{NINDA}[dan-na-aš pár-ši-ia]
-
- 12') DINGIR^{MES} pu-la-aš pí-tén ḫar-kán-zi
-
- 13') I-NA É.LUGAL ^dU ^dUTU ^dLAMMA
 14') ALAM^{MES} E.DINGIR^{LUM} ḫa-an-da-it []
 15') 3 BÁN. ZÍZ ^dU 3 BÁN ZÍZ ^dUTU 3 BÁN <ZIZ> ^dLAMMA []
 16') ^{DUG}ḫar-ši ^dUTU^{SI} da-a-iš []
 17') zé-ni šu-uh-ḫa-an-zi 1 UDU ^{DUG}[ḫar-ši]
 18') [ḫ]u-kán-zi 2 BÁN ZI.DA 1 DUG KA[š ^(GIŠ)ZAG.GAR(RA-ni)]
 19') [1 BÁ]N ZI.DA 1 DUG KA.GAG.A aš-nu-[ma-aš]
-
- 20') TE-SI^{DUG} ḫar-ši ḫe-e-ša-[an]-zi []
 21') 1 BÁN ZI.DA 1 ^{DUG}ḫu-up-pár [KAŠ] da-pí-aš E[GIR-an-da]
 22') ^{DUG}ḫar-ši ma-al-la-an-z[i] ḫar-ra-an-zi

§4 IV

- 1') [..... ^{DUG}ḫar]-ši
 2') [.....]x
 3') [.....]x
 4') [X BÁN ZI.DA 1? DUG KAŠ (ḫuú ḫaniššas?)
 (GIŠ)ZA]G.GAR.RA-ni

5') [X BÁN ZÌ.DA 1? DUG KA.GAG.A aš-nu]-ma-aš

6') [~~TE-ŠI~~^{DUG} har-ši he-e-ša-an]-zi

7') ½ BÁN ZÌ.DA 1 ^{DUG} hu-up-pár KA]Š ^{DUG} har-ši

8') ma-al-la-an-zi [har-ra-an-zi]

9') lu-kat-ma ^U Pu-pa-r[a I-NA ^{NA4} ZI. KIN

10') [pí-d]a-an-zi 1 UDU ^U 1 UDU ^U Pu-pa-ra BAL-an-zi

11') [(X) NINDA. KUR. RA] ^{DUG} har-ši 1 BÁN ZÌ.DA 1 ^{DUG} hu-up-pár KAŠ

12') [1 DUG KA.GAG.]A EGIR-an-da ti-ia-an ZAG.GAR.RA-ni

13') [1 PA ZÌ.DA] 1 DUG KA.GAG.A aš-nu-ma-as DINGIR^{LUL} ar-

ha

14') [pí-da-an-z]i 2 ^{NINDA} dan-na-aš pár-ši-ia

15') [.....DUB (կամ TUP-PU)] EGIR-an tar-nu-wa-as

16') [A-NA ^UX] ^{URU}Wa-at-ta-ru-uš-na-aš

17') [A-NA ^U.....]x ^{URU}Kar-du-uš-ša-aš

18') [A-NA ^Ux (-) t]i?-iš-ša-na-aš ^{URU}X-x

19') [A-NA ^UX]-hu-mi-ta-i-ma [^{URU}U]Ar-ta-šu-uš-ša-aš

20') [.....EZEN₄]^{HI. A} QA-77

Թարգմանություն

Դ.Կ. I

5)

6)

7) [1 ha]nišša գարեջուր՝ պ[ատվանդանի համար],

8) [x BÁN սղյու]ր, 1 huppar գարեջուր, [այնուհետև ամբողջը (?)]

9) [harš]i-ում մանրում (և) խ[առնում են]:

10) Իսկ [երբ] աստծուն (և) [harši-ով] մեծ հացը [huwaši]

11) են [ա]յանում: Նախկինում] 1 ոչխար [էին զոհաբերում]

12) harši-ով մեծ հաց, 1 [զավ]աթ գարեջուր՝

13) պատվանդանի համար, 2 BÁN ալյուր, 1 (?) KA.GAG.A (?), 1 զավաթ գարեջուր՝ ի ապահովումն]:

14) (Այնուհետև) աստծուն ետ են տանում:

15) [.....

ՀԿ III

1') [har]ši-ով [1?] մեծ հա[ց], 2 BĀ[N ալյուր,]

2') 1 անոթ զարեջուր այնուհետև դ[նում են պատվանդանին (?)]:

3') 1 parisu ալյուր, 2 անոթ KA.GAG.A [ի ապահովումն]:

4') (Այնուհետև) [աստված]ներին ետ են տանում: 3 [dannas hawg են փշրում]:

5') Իսկ [եր]բ Վանցապանդա լեռան համար [.....]

6') harši-ով մեծ հացը huwa[ši]

7') են տանում: 1 ոչխար են գոհարեբում:

8') harši-ով մեծ հացը, 2 BĀN ալյուր, 1 [huppar զարեջուր],

9') 1 անոթ KA.GAG.A այնուհետև [պատվանդանին են] դնում[ն]:

10') 1 parisu ալյուր, 2 անոթ KA.GAG.A ի ապահովումն []:

11') (Այնուհետև) աստծուն ետ են տանում: 1 [dannas hawg են փշրում]:

12') pulas-ի աստվածներին ետ են տանում:

13') Արքայի պալատում Ամարոպի աստծու, Արևի աստվածուհու, Պահապան աստծո

14') պատկերները տաճարի տեղադրվեցին:

15') 3 BĀN էմներ՝ Ամարոպի աստծուն, 3 BĀN էմներ՝ Արեի աստվածուհուն, 3 BĀN «էմներ»՝ Պահապան աստծուն:

16') «Արքան» լցնում է harši-ի մեջ:

17') Տարեվերջին (harši -ն) լցնում են: [harši-ում] 1 ոչխար

18') են [գ]ոհարեբում: 2 BĀN ալյուր, 1 անոթ զարե[ջուր՝ պատվանդանին]:

19') [1 BĀN ալյուր, 1 անոթ KA.GAG.A ի ապահովումն]:

20') Գարնանը harši-ն բաց[ում] են []

21') 1 BĀN ալյուր, 1 huppar [զարեջուր], այ[նուհետև] ամբողջը

22') harši-ում մանրում[ն] (և) խառնում են:

ՀԿ IV

1') [..... har]si

2') [.....

3') [.....

- 4') [X BĀN ալուր 1 (?) գավաք գարեջուր՝ պատ]վանդանին:
5') [X BĀN ալուր 1 (?) գավաք KA.GAG.A' X] X:

6') [Գարնանը harši-ն քացու]ն են:

7') 1/2 BĀN ալուր, 1 [huppar գարեջ]ուր harši-ում

8') մանրում (և) [խառնում են]:

9') Իսկ առավոտյան Պուպար[ւա] լեռան Ամսյրուպի աստծուն
huwaši

10') են [աա]նում: 1 ոչխար՝ Ամսյրուպի աստծուն, 1 ոչխար՝ Պու-
պարա լեռանն են զոհաբերում:

11') harši-ի [X մեծ հաց], 1 BĀN ալուր, 1 huppar գարեջուր,

12') [X անոթ KA.GAG.]A այնուհետև պատվանդանին են դնում:

13') [1? parisu ալուր], 1 անոթ KA.GAG.]A ի ապահովումն: Աստ-
ծուն ետ

14') են [տանու]մ: 2 dannas հաց են փշրում:

15') [.....աղյուսակը] արձակված (աստվածություն-
ների)՝

16') Վաաարուսա քաղաքի [... աստծուն],

17') Կարդուսա քաղաքի [... աստծուն],

18') X քաղաքի [.....տ]իսանաս աստծուն,

19') Արաաառուսա քաղաքի [...]-իսումիտաիմա աստծուն:

20') [.....ծես]երը: Վերջ:

Ծանոթագրություններ

Դ-կ I

7) Աստվածություններին տրվող զոհաբերությունների և մատու-
ցումների ինվենտարում ^{DUG}hane/iissa-ն («անոթ՝ հեղուկների համար»,
տես J. Friedrich, HWb, S. 50) հիշատակվում է մեր տեքստին զուգահեռ
այլ տեքստերում (օր. KBo II 7 Դ-կ 4, 9 և այլն, KBo II 13 Դ-կ 6, 8 և այլն):
Ինչպես այս, այնպես էլ տեքստում հիշատակվող մյուս անոթների դեպ-
քում, համապատասխան տերմինների ճշգրիտ քարգմանությունը հնա-
րավոր չէ: Երկրորդ լակունայի վերականգնումը՝ ըստ տեքստում
կրկնվող տրաֆարետային արտահայտությունների (Դ-կ I 12f., Հ-կ III 9',
18', IV 12'): BĀN-ը տարողության միավոր է՝ մոտ. 8, 4 լիտր (J. Tischler,
HHw, S. 215):

8) Վերականգնումը՝ ըստ ՀԿ III 21': *huppar*-ը եփելու համար մախատեսված անոթ է:

9) Վերականգնումը՝ ըստ ՀԿ III 22':

10) Առաջին լակունայում [*GIM-an*] (= *mahjan* „երր“) վերականգնումը պայմանական է; նկատի առնելով մման տեքստերի տերմինաբանությունը (KBo II 7 ԴԿ 11, 15, 26 և այլն, KBo II 13 ՀԿ 2 և այլն), կարելի է առաջարկել նաև *lu-kat-ma* „իսկ առավոտյան/լուսադեմին“ (*lukkatta/i* մակբայ + *-ma* էնկլիտիկ մակբայ, տես J. Friedrich, *Kurzgefasstes Hethitisches Wörterbuch*, Heidelberg, 1991, S. 130): Ի դեպ, ՀԿ IV 9'-ում առկա է հենց այս մակբայը:

Այս և 11-րդ տողի սկիզբը տրաֆարետային արտահայտություն է; *huwaši*-ից առաջ որոշ տեքստերում *I-NA*-ն բացակայում է:

11) *annalla/i*- „վաղ, նախկին (ում)“ ածականը, որ հաճախ է հանդիպում ծիսա-պաշտամունքային քնույթի տեքստերում (տես J. Friedrich – A. Kammenhuber, *Hethitisches Wörterbuch*, Bd. I. A, Heidelberg, 1975–1984, S. 74ff. [Zweite, völlig neubearbeitete Auflage]; J. Puhvel, *HED*, vol. 1–2, 1984, p. 52ff.), ունի երկու զուգահեռ ձևեր (*annalli-/annalla-*):

Երկրորդ լակունայի վերականգնումը՝ ըստ տրաֆարետային արտահայտությունների (ՀԿ III 7', IV 10'; KBo II 7 ԴԿ 7 և այլն):

12) Վերականգնման համար հմմա. KBo II 7 ԴԿ 15: Տեքստում առկա է *ḫaršiyal(i)*- „հացի անոթ, պիթու“ (J. Puhvel, *HED*, v. 3, 1991, p. 191ff.) բառի համառոտ ^{DUG}*harsi* ձևը; բառը ծագում է ^{NINDA}*ḫarši* „հաստ/փքված հաց“ բառից (= *NINDA. KUR₄. RA*):

13) Հմմտ. ՀԿ III 10': KA. GAG. A-ն ակոնոլային խմիչք է, թերևս, գարեջրի տեսակ (= *uḫp. piḫu*, տես J. Friedrich, *HWb*, S. 279 [այստեղ առկա է հնացած KA.DU.(A) գրադարձումը]):

ՀԿ III

1') Հմմտ. ՀԿ III 8'–9', 18':

2') Հմմտ. ՀԿ III 9', IV 12':

3') Հմմտ. ՀԿ III 10', 19':

4') Հմմտ. ՀԿ IV 14':

2') Լակունայում ^(GİŠ)ZAG. GAR. RA-ni վերականգնումը (հմմտ. ՀԿ III 9') հնարավոր է, սակայն այդ դեպքում պիտի օգտագործվեր աղյուսակի եզրը:

7') Տես վերը՝ (7):

11') Հմմտ. ՀԿ IV 11': KBo II 7 ԴԿ 16: Աստվածության արձանը ետ տանելուց հետո մշտապես սակա է այս գործողությունը: Այն կարող է արտահայտվել ինչպես *parš-*, *paršiya-* «փշրել, մանրել» բայի դերբայա-

կան ձևով (paršiya «փշոված»), այնպես էլ բայի ներկա ժամ. III դեմքի հոգն. ձևով՝ paršianzi; լակունայում կարող էր լինել երկուսից որևէ մեկը:

15') Երրորդ աստվածության հասանելիքը գրչի կողմից բաց է թողնված (ZIDA):

16') Արքան նշված է ⁵UTU⁵ «Արև» տիտղոսով:

17') 1 UDU ⁵harši hukanzi գործողությունը վկայված է KBo II 13, 5-ում: Նշանակում է, ^{DUG}harši-ն ծխականագի ընթացքում կիրառվող հիմնական գոհանքն է, քանի որ դրանում ոչխար են գոհաբերել:

Հկ IV

4') Հմմտ. ԴԿ I 12-13, ՀԿ III 8'-9', 18'-19':

5') Հմմտ. ՀԿ IV 13':

7'-8') Հմմտ. ԴԿ I 8-9, ՀԿ III 8'-9', 18', 21', IV 11', 13', որտեղ ZIDA-ն և զարեջուրը հիշատակվում են մույն հաջորդականությամբ:

11') Վերականգնումը ըստ ՀԿ III 8'-11':

15'-20') Տեքստի եզրափակիչ հատվածի տուժած մասերի վերականգնումը ըստ մույնատիպ KUB XXVII 68-ի (տես ստորև տեքստում):

18') Լակունայում սկսվող բառը Յ. Տիշերը դիտում է որպես տեղանուն (OGhT. 2, S. 186), սակայն հաջորդող քաղաքի անունը վկայում է այն մասին, որ սա պիտի դիցանուն լիներ; հմմտ. դիցանուն – տեղանուն շարքը նախորդ 2 սաղերում:

Մուլլամա քաղաքի Իշաար աստվածուհին և Ամարտայի աստվածը

Տեքստ: KBo XXXI 169⁹ – Ինվենտարային համարը՝ 342/f.: Պահպանվել է աղյուսակի Դիմային կողմից 14 սաղ: Հակառակ կողմը գրված չէ:

Տեքստի բնույթը

Ի տարբերություն KUB LVI 40-ի, այս տեքստում նկարագրվում է թագուհու (նաև արքայի) և մեկ այլ՝ անհայտ անձնավորության՝ կոնկրետ բնակավայրերում իրականացված ծխական արարողությունը: Մուլլամա քաղաքի Իշաարի երկրպագման արարողությունը ընթանում է Խեթական տերության հարավային շրջաններից մեկում՝ մոտավորապես Հալիսի մեծ ոլորանից հարավ, հարավ-արևմուտք գտնվող հայտնի կրոնական կենտրոն Ուսսայում¹⁰: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրադարձությունները շարադրվում են առաջին դեմքով (վերը նշված անհայտ անձնավորության անունից), կարելի է ենթադրել, որ այս բեկորը չի ներկայացնում պաշտամունքային արարողություն: Այն հի-

շեցնում է լավ վկայված տեքստերի մի խումբ, որը կրում է «դատական պրոցես» պայմանական անվանումը¹¹:

Տեքստում չեն մասնավորեցվում աստվածություններին մատուցվող իրերը և արարողակարգը: Երկրորդ տողում հիշատակվում է ինչ-որ քաղաքի Ամարոպի աստվածը, իսկ 4–5-րդ տողերում՝ Ուսսայում «աստծուն» (թերևս, մույն Ամարոպի աստվածը) արվող երկրպագությունը: Վերջինս, հաշվի առնելով չորրորդ սաղում վկայված *para tarnummaš* և *EZEN₄* [.....] տերմինները, ընթանում է այս կրոնական առոտքը շրջանակներում: Տեքստի 8-րդ տողից հետո առկա անջատիչ գիծը վկայում է այն մասին, որ երկրպագվող աստվածությունները տարբեր են:

Իշտարի երկրպագման արարողությունն անցկացնողը թագուհին է (9'), իսկ ինչ վերաբերում է Ամարոպի աստծուն, ապա դա կարող էր արքան լինել: 7

KBo XXXI 169

Գիտական տառադարձում

ԴԿ I

1') [.....] pī x x [.....

2') [.....] x x [UD.X.] KAM-za A-NA ⁴U? x [x.....INA ^{URU}.....]

3') [...zi[.....] x x U-UL ^{URU}Zi?-[.....

4') [2?] EZEN₄-aš? EZEN₄ pa-ra-a tar-nu-um-ma-aš EZE[N₄.....

5') A-NA DINGIR^{LIM} INA ^{URU}U-uš-ša i-ia-nu-un na-a[š.....

6') EGIR-pa DÜ-mi na-aš ma-a-an ke-e-da-ni MU. [KAM-ti.....

7') na-aš ša-ku-wa-sar-ru-uš-pát i-ia-mi ma-a-na-[aš/at?.....

8') i-e-mi na-aš-kán 2-ŠÚ ha-pu-uš-wi [.....

9') MUNUS.LUGAL-za-kán INA ^{URU}U-uš-ša A-NA ⁴IŠTAR

^{URU}Šu-u[l-la-ma i-ia-at]

10') har-ša-uš-za ku-it tu-e-el ŠA DINGIR^{LIM} pī-r[a-an ⁴UTU^{ŠI}...]

11') na-aš ma-a-an DINGIR^{LUM}-ia U-UL pī?-iš-[.....

12') A-NA ⁴UTU^{ŠI}-ia-a[š?-ká]n EGIR-pa-an-da U-U[L.....

13') [n]u-za ⁴U ^{URU}Šu-ul-la-ma I-NA ^{URU}x x x [.....

14') [ŠA DINGIR^{LIM}] pī-ra-an ⁴UTU^{ŠI}.....

Թարգմանություն

ԴԿ I

1')

- 2') [...] [X op] [X քաղաքում ...] Ամպրոպի աստծուն (Պ) [.....]
 3') [.....] ... [.....] քաղաք (ում) [.....]
 4') [2"] տոներ՝ (աստծո) արձակման (դուրսբերման) (և) [.....]
 5') Աստծուն Ոսսա քաղաքում ես երկրպագեցի: Եվ նրան [.....]
 6') հետո երկրպագեմ: Եթե նա այս տալիս [.....]
 7') Ես այդ ամբողջությամբ երկրպագեմ: Եթե [նա/այդ [.....]
 8') կանեմ (և) նրանց (համար) ես կրկնակի անգամ կկարգավորեմ [...]

9') Թագուհին Ոսսա քաղաքում Սուլլսմա քաղաքի Իշտարին
 [երկրպագեց]:

10') քո [X] հացի շերտերը, որ աստծո սալջև Արևը (=արքան – Ա.
 Զ.) ...]

11') Եվ եթե աստվածն էլ չտա [.....]

12') Արևի համար էլ ն[ա հթ]ե հետո չ[տա".....]

13') [Ե]վ Սուլսմա քաղաքի Ամպրոպի աստծուն [X] քաղաքում [.....]

14') [Աստծո] ամջև Արև[ը [.....]

Ծանոթագրություններ

Դկ 1

2') [UD. X.]KAM-za վերականգնվող քառում թվականը կարող էր
 նաև քացակայել: Երկրորդ լակունայում պիտի գտնվեր տեղանունը, որ-
 տեղ իրականացվել է երկրպագման արարողությունը: "Ս վերականգնու-
 մը հստակ չէ: Պահպանված հետքերը նշում են ս նշանի առկայությունը
 (Ամպրոպի աստծո գաղափարագիրը), որին, սակայն, անմիջապես հա-
 ջորդում է մեկ (հնարավոր է՝ 2) ուղղահայաց սեպ և մեկ վտքը հռանկյուն
 սեպ:

4') Տողի սկզբի վտքը լակունայում պիտի թվական անուն գտնվեր՝
 այնուհետև նշվող տոնակատարությունների քանակին համապատաս-
 խան: Այս տողում պահպանվել է մեկ սանի անվանումը (para taruutmas)
 և երկրորդի գաղափարագիրը (EZEN₄): Թեև, տողավերջի լակունա-
 յում տեղավորվի հագիվ մեկ սանի անվանում, որի հիման վրա էլ թվա-
 կանը կլինի «երկու»:

9') Լակունայում երկրպագման արարողությունը iya- «անել» քա-
 յով արտահայտելը վկայված է տեքստի նախորդ մասում (5'-8') և նման
 տեքստերում (տես, մասնավորապես, KUB LIV 1 II 8f. ' հողվածի վեր-
 ջում):

10') Լակունայում ⁵¹ՄՄՄ «Արև» (խեթական արքայի տիտղոսը) վերականգնման համար հմմտ. 14'-րդ տողը:

11') Լակունայից առաջ սկսվող բայը (pí-iš-[...]), թերևս, pešk-ն է (pá-i-, piya- „տալ“ բայի շարունակական ձևը): Այս բայը նախորդող UL (= le) արգելական մասնիկի հետ արտահայտում է աստծո հանդեպ ապագայում բացասական գործողության հնարավորություն (օր., երկրպագություն չկատարել): Այս նախադասությունը նախորդի հետ միասին իմաստային մեկ բլոկ է կազմում:

13') Սուլլամա քաղաքի Ամարոսի աստծուն երկրպագելու վայրը պարզ չէ: Դատելով զգալիորեն ջնջված նշաններից, դա Ուսսա քաղաքը չէ:

Իտավայի քաղաքները

Տեքստերում հիշատակվող քաղաքները հայտնի են դեռևս մ. թ. ա. XVդ. վերջերից որպես Իտավայի կարևոր քաղաքական կենտրոններ: Սուլլամա քաղաքի «ավագ» Վալվացիտին և Վատարոսնայի «ավագ» Սանտան հանդես են գալիս վերինեփրատյան երկրների ներկայացուցիչների շարքում որպես խեթական արքա Արնուվանդաս I-ի հետ կնքված «կոնկտիվ պայմանագրի» մասնակիցներ¹²: Վատարոսնան մեկ անգամ հիշատակվում է HT 2 V 19-ում, որտեղ այդ քաղաքից ոմն քրմուհի ¹AMA(-iš) (Anniš) տրվում էր Կուկուվալա քաղաքի (^{RU}Kukuwawa) տունարին¹³:

KUB LVI 40-ում Վատարոսնայի հետ միասին հիշատակվող տեղանունների աշխարհագրական պատկանելությունը պարզ չէ, քանի որ վերջիններս խեթական տեքստերում այլևս վկայված չեն: Հրատարակչի կարծիքով, դրանք, թերևս, պիտի գտնվեին «հարավ-արևելյան Անատոլիայում», այն է՝ Իտավայում: Այդպիսի ենթադրության համար որոշակի հիմքեր կան: Սի շարք պաշտամունքային տեքստեր ներկայացնում են որևէ կարևոր կրոնական կենտրոնի բոլոր աստվածություններին տրվող ամենամյա կամ ամենամսյա մատուցումների ցանկը: Դրանցից մեկը բավական լավ պահպանված եզրափակիչ մասը իր կառուցվածքով շատ նման է մեր տեքստին:

KUB XXVII 68 (= CTH 673)

ՀԿ IV

15) [.....]-ŠU (?) TUP-PU EGIR-an tar-nu-wa-aš

16) ŠA DINGIR^{MES URU} Ne-ri-iq-qa

17) ke-e-da-ne-eš-ša-an A-NA TUP-Pí

18) 6 DINGIR^{MES} ^dU <URU> Za-ha-lu-uq-qa ^dZA.BA₄.BA₄

- 19) ⁴U AN^E ⁴Te-li-pi-nu-uš
20) ⁴LAMMA ⁴Hal-ki-iš KIN-an-te-eš

Թարգմանություն

- 15) «[.....] անգամ (?) արձակման ծեսը
16) Ներիկ քաղաքի աստվածների:
17) Այս (բանը) նրանց համար սեպագիր սալիկի վրա.
18) Վեց աստվածներ՝ Յախալուկկա <քաղաքի> Ամարտայի աստ-
վածը, Ջաբաբա աստվածը,
19) «Երկնային» Ամարտայի աստվածը, Տելիպինուսը,
20) Պահապան աստվածը, Խալկին – ապահովված են»:

Վաաարուսնայի և Սուլլամայի տեղադրությունը դեռևս պարզ չէ:
Առաջինի անվան ստուգաբանությունը խեթ. watar «ջուր, աղբյուր» բա-
ռըց՝ վարող է ուղղակիորեն ակնարկել դրա տեղը որևէ ջրասառ վայ-
րում (օր., գետերի ակունք, լիճ): Սուլլամայի՝ կարևոր կրոնական կենտ-
րոն լինելը, մահ տեղադրության մասին որոշ ակնարկը պարունակվում է
Խաթթուսիլիս III-ին կամ Թադիսալիյաս IV-ին պատկանող մի տեքս-
տում, որի համապատասխան հատվածը ներկայացնում ենք ստորև:

KUB LIV 1¹⁵

ԴԿ II

- 8) UM-MA ^{md}IŠTAR-LÚ ⁴Ta-ru-up-ša-ni-in-wa-za ku-wa-[pí]
9) I-NA ^{URU}Su-la-ma DÚ-nu-un nu-wa-mu-kán ^mMu-ut-ti-[iš]
10) an-da u-it nu-wa-mu am-me-el me-mi-iš-ta [...]

Թարգմանության

- 8) «Այսպես (ասում է) Շալուշկացիսին. 'Եր[p] Տարուպսանի
աստծո համար
9) Սուլլամա քաղաքում ես (երկրպագություն) կատարեցի, ինձ
մոտ Մուատի[սը]
10) եկավ և ասաց ինձ [.....]»:

ԶԿ IV

- 20') ÍD^{HL A}-ia-wa-kán ku-i-e-eš
21') [.....] ^{UR}SAG^KSu-ul-la-[a]m-ma pa-ra-a ar-ša-an-zi
22') [nu-wa-r]a-at GIM-an Ú-[U]L ta-ru-up-pa-an-ta-ri

Թարգմանություն

20') „.....Եվ գետերը, որ

21') [.....] Սուլլամա լեռից ներքև են հոսում,

22') [և] երբ (զր. «ինչպես») դրանք չ[ե]ն միանում ...“:

Այս տեքստում առաջին դեմքով խոսում է խեթական պաշտոնյա՝ քարձրաստիճան ազնվական Շավուշկացիային (թերևս, արքայատոհմի անդամ): Հղված հատվածներից հնարավոր է ենթադրել, որ՝

1) Սուլլամայում, քաղի Ամպրուպի աստծուց և Իշաարից, երկր-պազվել է նաև Տարուպսանի աստվածը;

2) Սուլլամա քաղաքը գտնվել է համանուն լեռան շրջակայքում:

3) Սուլլամա լեռից սկիզբ են սանել երկու կամ ավելի գետեր:

Պատմական եռնախոսք

Իսուվայի երկու քաղաքների աստվածությունների ինտեգրացումը խեթական տերության կրոնական կյանքի համակարգում, որ վկայված է նաև այլ տեքստերով¹⁶, պաշտոնապես առաջին անգամ ձևակերպված է Մուվաաայիս II-ի (մ. թ. ա. 1300–1280–ական թթ.)՝ «Խաթթիի բոլոր աստվածներին» ուղղված աղոթքում¹⁷, որտեղ Իսուվայի աստվածները հանդես են գալիս ինքնուրույն՝ տերության մյուս շրջանների աստվածություններից առանձին:

KUB VI 45 (=46)¹⁸

ԴԿ II

64) ԴIŠTAR^{URU} Šu-ul-la-ma ԴU^{URU} Ha-at-ra-a DINGIR. LU^{MEŠ}

65) DINGIR. MUNUS^{MEŠ} HUR.SAG^{MEŠ} ID^{MEŠ} ŠA KUR^{URU} I-šu-wa

Թարգմանություն

64) «Սուլլամա քաղաքի Իշաարը, Խաարա քաղաքի Ամպրուպի աստվածը, արական սեռի աստվածները,

65) իգական սեռի աստվածները, լեռները, գետերը Իսուվա երկրի»:

Խաթթիի արևելյան էքսպանսիայի ենթատեքստում Իսուվան կարևոր տեղ ուներ մ. թ. ա. XV դ. երկրորդ կեսից: Թուրխալիյաս I (II) –ի կողմից նվաճվելուց¹⁹ հետո այն մի քանի տասնամյակ վերածվեց երկու

մրցակից հարևանների՝ Խեթական տերության և Միտաննիի միջև բու-
ֆերային երկրի՝ Ժամանակ սա Ժամանակ համապատասխանաբար ա-
ռաջինի և երկրորդի համար: Սուպլիկուիումաս I-ի կողմից Միտաննիի
նվաճման նախօրեին Իսուվան վերջնականապես անցավ խեթերի գե-
րիշխանության տակ²⁰: Նրա հաջորդ Սուրսիլիս II-ի հայաստական ար-
շավանքների շրջանում Իսուվան խեթական տեքստերում չի հիշատակ-
վում: Թերևս, այն լոյալ էր, որ կարելի է բացատրել Միտաննիի նվաճու-
մով:

Իսուվան կրկին, սակայն արդեն կանոնավոր, սկսում է հիշատակ-
վել տեքստերում Խաթթուսիլիս III-ի և Թուդիսալիյաս IV-ի օրոք՝ որպես
Խաթթիի քաղաքական ազդեցության ոլորտի կարևոր պետություն.
Խաթթիի և Իսուվայի արքայատոհմերի միջև սերտ ազգակցական կա-
պեր էին հաստատվել²¹: Իսուվայի՝ տեքստերով վկայված երկու արքա-
ները՝ Արիշարթուման և Էլիշարթուման լիարժեք մասնակցում էին տե-
քստյան քաղաքական և կրոնա-պաշտամունքային կյանքին:

Հիշատակելի է Արիշարթումայի ներկայությունը Խաթթուսիլիս
III-ի և Թարխունասասայի արքա Ումիթեշուրի միջև կնքված պայմա-
նագրում՝ որպես վկաներից մեկը²², ինչպես նաև արքայազն Էլիշար-
թումայի նման դերը Թուդիսալիյաս IV-ի և Թարխունասասայի արքա
Կուրունտայի պայմանագրում²³: Իսուվայի արքան կարող էր արշա-
վանքների Ժամանակ առաջնորդել խեթական զորքը²⁴: Իսուվան այս
շրջանում արտոնյալ դիրք ուներ Խեթական տերության կախյալ պե-
տությունների համակարգում (Կարգամիսի, Թարխունասասայի, Ամուր-
բուի, Սեխայի և Տումմանայի հետ միասին):

ARAM KOSYAN

THE RELIGIOUS CENTERS OF ISUWA IN THE HITTITE PERIOD

The paper deals with two prominent political entities of Isuwa (later Arm.
Tsopk) – Watarusna and Sullama which, according to the Hittite cuneiform texts,
were also outstanding religious centers of the area. Two Hittite texts – KUB LVI 40
and KBo XXXI 169 describe yearly and occasional offerings to the deities of these
cities, i. e. the god of Watarusna and the Storm-god Sullama. Full publication of these
texts adds a reliable data dealing with the cult of these deities. KUB LVI 40 contains
also several place-names, probably located within the kingdom of Isuwa in the XIIIc.
B. C.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն հոդվածը մասն է՝ «Խեթական սեպագիր աղբյուրները Հայկական
լեռնաշխարհի պատմության վերաբերյալ» ծրագրի, որը հեղինակը կատա-

- րել է Գերմանիայի Վյուրցբուրգի համալսարանի Հին արևելյան բանասիրության ինստիտուտում՝ «Ա. Ֆոն Հումբոլդտի ֆոնդի» հովանավորությամբ (նոյեմբեր 2000 – փետրվար 2002):
2. Տեքստը հրատարակված է ինքնագիր եղանակով 1986 թ. (H. Klengel):
 3. Այս տեքստերը Է. Լարոշի կատալոգում (E. Laroche, CTH) ցրված են տարբեր բաժիններում (CTH 501–530): Դրանց մի մասի հրատարակությունը և հետազոտությունը տես՝ Ch. W. Carter, *Hittite Culti-Inventories*, Chicago, 1962 [Dissertation]:
 4. Stu Carter, loc. cit., p. 1ff.:
 5. Որոշ տեքստերում տեղեկություններ են պահպանվել այդ արձանների չափսերի վերաբերյալ: Դրանք ձուլվում էին որևէ մետաղից (երկաթ, արծաթ, անագ/կապար) և փոքրածավալ էին: Այսպես, Վատարվա քաղաքի Ամպրուպի աստծո արձանիկը ինչ–որ նյութից էր (քար)՝ երիզված անագով և ուներ 1/2 šekan բարձրություն (KBo II 1 II 21f.), Պարենտա քաղաքի Ամպրուպի աստծո արձանիկը՝ 1 šekan բարձրություն (KBo II 1 III 7f. ; 1 šekan–ը = մոտավորապես 22սմ.՝ J. Tischler, HHw, S. 148):
 6. Այս տեքմիմով նշվում է տաճարային համալիրում առանձնացված կառույց, որտեղ նման գործողություններ էին իրականացվում: huwaši բառի վկայությունների և մեկնաբանությունների մասին տես J. Puhvel, HED, vol. III, New York, 1991, p. 438ff.:
 7. Այս առումով հիշատակելի է KUB XII 2–ը, որտեղ, ի թիվս այլ աստվածությունների, թվարկվում են Աշշուրի և Հայասայի Ամպրուպի աստվածները:
 8. KUB XII 2–ում նրանք հիշատակվում են անվանապես; օր. «Աշշուրի Ամպրուպի աստվածը, քուրմը՝ Մարասսանդան» (I 10), «Պիխսսիմի աստվածը, քուրմը՝ Խուլլուն» (I 18), «Յարրի աստվածը, քուրմը՝ Խալվացիտին» (I 22), «Հայասայի Ամպրուպի աստվածը, քուրմը՝ Վաննին» (I 24):
 9. CTH 590: Տեքստը հրատարակված է ինքնագիր եղանակով 2000 թ. (H. Otten – Chr. Rüster): Ըստ հրատարակիչների, հնարավոր է, սրան կարող է պատկանել KBo XXXI 168 փոքր բեկորը:
 10. Տեղադրման համար տես OGHt. I, S. 464f.:
 11. EZEN₄ para tarummaš–ը (բառացի՝ «արձակում/դուրսբերում») լավ վկայված տոներից է, որը կազմում էր առանձին աստվածությունների երկրպագման տոնակատարության մասը և նշվում էր զարմանը; տեքմիմի բացատրության համար տես J. Tischler, *Hethitisches etymologisches Glossar*, Bd. III/9, Innsbruck, 1993, S. 197:
 12. CTH 293–297.
 13. KUB XXIII 72+ (= CTH 146):
 14. CTH 235 (= «Կանանց ցուցակ»): Հավանաբար, սա այքի ընկնող քրմուհի էր, քանի որ ցուցակում առաջինն է և հիշատակվում է անվանապես:
 15. E. Forrer, *Quellen und Brunnen in Alt-Vorderasien*, “Glotta” 26, 1938, S. 179f.; հեղինակը watar–ը թարգմանում էր ոչ թե «ջուր», այլ «ջրատեղի, աղբյուր և այլն» (“Wassergrube, Wasserstelle, Brunnenloch”): Ըստ Է. Ֆորրերի, որի տեսակետն ընդունում էր նաև Է. Լարոշը (*Études de toponymie asiatique*,

- “Revue hittite et asianique” 19, 1961, p. 79, 86, 93 n. 27), այս տեղանունը ծագում է *wattarussar «աղբյուրական» (“eine Ansammlung von Brunnen”) (-sar = չեզ. սեռի հավաքական գոյականների ածանց) նախածկից (-sar/-sna): Այս նույն արմատից կա ևս մեկ տեղանուն՝ 𐎶𐎵 Watarwa (դրանում -wa ածանցի առկայության մասին տես՝ H. Th. Bossert, Asia, 1946, S. 51):
16. Տեքստի հրատարակությունը՝ A. Archi – H. Klengel, Die Selbstrechtfertigung eines hethitischen Beamten (KUB LIV 1), „Altorientalische Forschungen“ 12, 1985/1, S. 52ff.:
 17. Հատկապես շատ են այն տեքստերը, որտեղ հիշատակվում է Իսուվայի արքայի մասնակցությունը տեքստի կրոնա-պաշտամունքային կյանքին (IBoT II 131; KBo XXIV 132; KUB XLIV 4; KUB LVI 28 և այլն): Սրանցից նշելի է KUB LVI 28–ը, որտեղ, միևնույն ենթատեքստում, հիշատակվում է խեթական թագուհու ծիսական ուղևորությունը Սամուխա և Անասիպա քաղաքներ, ինչպես նաև Իսուվայի արքայի ուղևորությունը Կիցցուվաումա: Այստեղ խեթական արքայազն Թուդիալիյասի հիշատակությունը թույլ է տալիս տեքստը թվագրել Խաթթուաիլիս III–ի շրջանով, այսինքն, տվյալ տեքստում Իսուվայի արքան Արիշարրուման է, իսկ խեթական թագուհին՝ Պուդուխեպան:
 18. Տեքստի հրատարակությունը՝ I. Singer, Muwatalli's Prayer to the Assembly of Gods Through the Storm-God of Lightning (CTH 381), Atlanta, 1996:
 19. Տեքստի երկու պատճենների միջև կան որոշ գրաֆիկ տարրերություններ: մենք ներկայացրել ենք KUB VI 45–ը:
 20. KUB XXIII 11/12 ՀՎ 27'–34' (հրատարակությունը՝ O. Carruba, Beiträge zur mittelhethitischen Geschichte. I, „Studi Micenei ed Egeo-Anatolici“ XVIII, 1977, S. 161ff.):
 21. Իսուվայի նվաճումը հիշատակվում է Սուպալիլուիումաս I–ի և Սիտաննիի արքա Շատուիվազայի պայմանագրում (E. Weidner, Politische Dokumente aus Kleinasien, Leipzig, 1923, N. 1 ՀՎ 14–24):
 22. Shu' H. G. Güterbock, Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe, „Journal of Near Eastern Studies“ 32, 1973, p. 135ff. ; J. de Roos, Who was Kilushepa?, „JEOL“ 29, 1987, p. 74ff. ; նաև՝ Ա. Զույրան, Իսուվան (Օնիքը) մ. թ. ա. XIII–XII դարերում, “ՊԶՀ”, 1997/1, էջ. 178–179:
 23. KBo IV 10 ՀՎ 29; տեքստի հրատարակությունը՝ h. van den Hout, Der Ulmitešub-Vertrag, Wiesbaden, 1995 [= „StBoT“ 38]:
 24. Bo 86/299 ՀՎ 34 (= H. Otten, Die Bronzetafel aus Boğazköy. Ein Staatsvertrag Tuthaliyaš IV, Wiesbaden, 1988 [= „StBoT“ Beih. 1]):
 25. Istanbul Arkeoloji Müzelerinde Bulunan Boğazköy Tabletlerinden Seçme Metinler (H. Bozkurt–M. Çiğ–H. G. Güterbock), Istanbul, 1944, Bd. I, 32.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

CTH – E. Laroche, Catalogue des textes hittites, Paris, 1971.
 HED – J. Puhvel, Hittite Etymological Dictionary, Berlin – New York, 1984ff.
 HHw – J. Tischler, Hethitisches Handwörterbuch, Innsbruck, 2001.

- HW – J. Friedrich, Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1991.
KBo – Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig und Berlin.
KUB – Keilschrifturkunden aus Boghazköi, Berlin.
OGhT. 1 – J. del Monte und J. Tischler, Die Orts- und Gewässernamen des hethitischen Texten, Tübingen, 1978.
OGhT. 2 – J. del Monte, Die Orts- und Gewässernamen des hethitischen Texten, Tübingen, 1992.
StBoT – Studien zu den Boghazköy Texten, Wiesbaden.